ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. սեպտեմբերի 14 թիվ 95 -Ա

ՆՈՒՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշման պահանջներով, և հիմք ընդունելով «Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար 2011 թվականի օգոստոսի 19-ին անցկացված մրցույթի արդյունքները և Նունե Մովսիսյանի անձնական դիմումը՝ *կարգադրում եմ.*

1. 2011 թվականի սեպտեմբերի 14-ից Նունե Ռուբիկի Մովսիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2010 թվականի հուլիսի 2-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ